

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ ԲԱՌԱՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀՐԱՉՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ «ԱՐՄԱՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ»-ՈՒՄ

ՍՈՒՄԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Թերևս քիչ հավանական է, ավելի լավ բնութագրել Հր. Աճառյանի «Արմատական բառարան»-ը, քան դա արել է ինքը՝ հեղինակը, բառարանի գրած առաջաբանում, որն ըստ էության կարելի է համարել բառարանագրության ծրագրային փաստաթուղթ: «Ստուգաբանության պատմություն» բաժնում հեղինակը թվարկում է այն հին մատենագիրներին, որոնք այս կամ այն կերպ անդրադարձել են բառերի մեկնությանը, կազմությանը, ստուգաբանությանը. «Այս մատենագիրներից յիշելու արժանի են Եզնիկ, Խոսրով Անձևացի, Ներսէս Լաբրոնացի, Գրիգոր Տաթևացի, Վարդան, Գրիգոր Մագիստրոս... », որոնց վերլուծությունները հայագետը արժևորում է իբրև «հայեացք»՝ կարծիք, «հայ լեզուի կազմութեան մասին»¹:

Ինչպես հայտնի է, Հր. Աճառյանի «Արմատական բառարան»-ում ընդգրկված արմատական բառերի բացատրությունը ներկայացվում է հինգ բաժնով.

- ա) բառագիտություն,
- բ) ստուգաբանություն,
- գ) ստուգաբանության պատմություն,
- դ) գավառական ձևեր,
- ե) հայերենից փոխառյալ բառեր:

Բառագիտության հատվածում հոլովաձևերին կամ խոնարհման ձևերին հաջորդող բուն բացատրությունից հետո տրվում են տվյալ բառի բառավկայությունները: «Վկայությունները» ենթաբաժինը ներածական խոսքում ներկայացնելիս՝ Հր. Աճառյանը գրում է. «Սրանք երկու նպատակ ունին. նախ որոշել բառի գործածության ժամանակը, երկրորդ՝ ճշտել նրա նշանակության նրբությունները»², հետևաբար, մատենագիտական

¹ Հր. Աճառյան, *Արմատական բառարան*, հ.Ա, Եր. 1971, էջ 4:

² Նույնը, էջ 16:

ցանկուն հավաքված հեղինակների, այդ թվում և նրանց մեջ հիշատակված Գրիգոր Տաթևացու աշխատություններն առանց բացառության տվյալ բառահոդվածում ձեռք են բերում սկզբնաղբյուրի արժեք՝ վերոնշյալ երկու առումով էլ:

14-15-րդ դարերում ապրելու և ստեղծագործելու փաստը Ռ.Ս.Ղազարյանին և Յ.Ս. Ավետիսյանին լիիրավ իրավունք է վերապահել Գրիգոր Տաթևացու գրական ժառանգության բառանյութն ընդգրկել «Միջին հայերենի բառարան»-ում, սակայն գրաբարալեզու ստեղծագործելու հանգամանքը, մյուս կողմից, նույն իրավունքն ընձեռել է Յր. Աճառյանին, և վերջինս Տաթևացու աշխատություններն ընդգրկել է հին մատենագիտության սկզբնաղբյուրների մեջ. ավելին, հավուր պատշաճի, իբրև արժանահավատ աղբյուր, Աճառյանը Տաթևացու բառագործածություններով հաճախ է ճշտում այս կամ այն բառաձևի ճիշտ գրչագիրը կամ ճիշտ գործածությունը՝ երբեմն նույնիսկ որոշ բառերի պարագայում ունենալով միայն նրա վկայությունը: Այսպես օրինակ, «Ապարքտիաս»՝ «հյուսիսային քամի» բառը, Յր. Աճառյանը բացի Արիստոտելի աշխատությունից, գործածված է գտնում միայն Տաթևացու «Գիրք հարցմանց»-ում, ընդ որում՝ ճիշտ մեկնաբանությամբ: Նշում է նաև, որ՝ «Ուղիղ մեկնեց նախ ՆՅԲ»³, չնայած հղումներից պարզ է դառնում, որ ժամանակին այն «ուղիղ մեկնել է» նախ Գրիգոր Տաթևացին, և սակայն հայտնի պատճառներով այս եզակի գործածությունը «Նոր հայկազեան բառարանի» հեղինակները չեն վկայակոչում: Այսպես է նաև հետևյալ բառերի պարագայում.

«Աղէկ», (ըստ Աճառյանի՝ առաջացած «աղ» բառից),

«Անգանակ» (երկունկանի անոթ),

«Ատուր» (Քրիստոսի խաչափայտի առաջին բևեռի անունը),

«Արգեստէս» (հյուսիս-արևմտյան քամի)

«Բէլ» - «կնքահայր». (ըստ Աճառյանի՝ նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում են գործածուած Տաթև. ամ.146. «Զհոգևոր հայր զկնքահայր, որ է **բէլն**»):

«Գաղտառ» - Աճառյանը բառը կապում է «գաղտ»՝ թաքուն իմաստի հետ: Ըստ հայագետի՝ **Նորագիւտ բառ է և «յետևից ծածուկ կծող շուն»** իմաստով վկայում է Տաթև. ամ. 250»:

«Գիժ» - (խենթ, խելագար),

«Գոսակ» - «քարձ, մօրուսի մազը չբուսնող». «Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում են գործածուած Տաթև. ծմ. ճժէ»:

³ Յր. Աճառյան, *Արմատական բառարան*, հ.Ա, էջ 232:

«**Գուրգուր**» - (թռչնի անուն). Աճառյանը համարում է բնածայն բառ, ինչպես և մեկնում է Տաթևացին:

«**Ղեզնի**» - «խաղողի ճմռելուց յետոյ մնացած ակելորդ թեփը». Աճառյանը բառը մեկ անգամ գործածած է գտել Տաթև. ամ. 113ա:

«**Լիսեռնածն**» (լիսեռի ձև ունեցող),

«**Լուսացու**» (Աճառյանը հղում է Տաթևացուն և տալիս՝ «այժմ կոչում է լուսագին» բացատրությունը),

«**Մղտատեսակ**» (խավար, մթամած),

«**Պատկել**» (բազմապատկել),

«**Ռամտես**» (ըստ Աճառյանի՝ «գրբաց»),

«**Սրտակրանք**» (ըստ Աճառյանի՝ «սիրտը պատող մաշկը՝ ներսի կողմից»),

«**Քալասիկե**» (Սարդի վերին երակը),

«**Քականօթ**» (հույն հոգևորականի զգեստի ձևավորում),

«**Քնափ**» (քնկոտ),

բառերի դեպքում, որոնց պարագայում միակ բառավկայությունը ըստ Աճառյանի փաստվում է Տաթևացու բառագործածությամբ:

Սրանց մեջ Տաթևացին ունի մի քանի բառավկայություններ, որոնք շատ հետաքրքրական են. այսպես օրինակ՝

Ատուր - «Քրիստոսի խաչափայտի առաջին բևեռի անունը» Տաթև. հարց. 495: Աճառյանը Տաթևացու այս եզակի գործածությունը բնութագրում է իբրև «նորագիտ բառ»: Բառն ըստ հայագետի «ատոր» ձևով պահպանված է Վանի բարբառում, որը փաստում է ժամանակին բառի գործածական լինելու մասին:

Բէլ - «կնքահայր». (ըստ Աճառյանի՝ նորագիտ բառ, որ մեկ անգամ գտնում են գործածուած Տաթև. ամ.146. «Զհոգևոր հայր զկնքահայր, որ է **բէլն**»), բառը մինչև հիմա «պէլի» տարբերակով գործում է մի շարք բարբառներում, որ ենթադրել է տալիս ժամանակին նրա համագործածական բառ լինելը:

Բէեղզեբուղ - Ըստ Աճառյանի ծագում է՝ «եբր. «be'elzebub», որ բուն նշանակում է «ճանճիկ աստուած» և փղշտացուց աստուածներից մեկն էր: Եօթանասունը այս բառը մեկնել կամ կարդացել են «be'elzebul», որ նշանակում է «աղտեղութեան կամ աղբի աստուած», որից՝ խսկց. «zibil»: Տաթևացին ահա գործածում է այս վերջին մասը միայն՝ «զեբուղ». Տաթև. ամ. 70, այսինքն՝ «աղտեղութիւն, աղբ»՝ որոշակի առումով վերաբերմունք դնելով բառիմաստի նկատմամբ:

Բոսոր - Աճառյանը բերում է բառի թե նախնական հատուկ անուն լինելը, ապա «արենագոյն կարմիր» իմաստը: Բերում է նաև Տաթևացու բացատրությունը. «Տաթև. ձմ. ճժա. մեկնում է «Եդոմն կարմիր երկիր թարգմանի և **բոսորն նեղութիւն**»: Տարբերվող այս բացատրությունն առկա է հենց փոխատու լեզվի մեջ, որտեղ բառը նշանակել է «ամրապատ և անմատչելի տեղ», որ պարունակում է նաև «նեղության» ուղիղ, այսինքն «նեղ լինելու» իմաստը:

«Գաղտառ» - Աճառյանը բառը կապում է «**գաղտ**»՝ թաքուն իմաստի հետ: Ըստ հայագետի՝ **Նորագիւտ բառ** է և «յետևից ծածուկ կծող շուն» իմաստով վկայում է Տաթև. ամ. 250»: Տաթևացին բառը բերում է իբրև «նախանձի» հոմանիշ՝ հետևյալ կերպ. «Իսկ նախանձոտն է որպէս **գաղտառ** շունն»:

Գնչել - «խոզի ճուտի ձայն», որից՝ «**գնչու**»՝ «թլուատ, թոթով, կակազ»: Տաթևացին բերում է «**գնչուտ**» տարբերակով, որը մեր կարծիքով մաքուր չարտասանելու հատկանիշի վերագրումն է ինչ-որ խմբի. «ի գնչուտ և ի լեզուատ արանց». Տաթև. հարց. 289:

Գուրգուր - «աղանիսի նման մի թռչուն է». «Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Տաթև. ամ. 421»: Աճառյանը համարում է բնածայն բառ, ինչպես և մեկնում է Տաթևացին. «Եկեալ հաւ մի, նստաւ ի վերայ ծառոյն, որ զոմանք **գուրգուր** և ոմանք դռուն կոչեն և ձայնեաց՝ **գո՛ւր գո՛ւր**»: Ավելացնենք, որ հատվածը Գրիգոր Լուսավորչի դայակի կողմից նրան փախցնելուն է վերաբերում, որտեղ Տաթևացին փորձում է նաև ստուգաբանել «Գրիգոր» անունը:

«Դեզնի» - «խաղողի ճմռելուց յետոյ մնացած աւելորդ թեփը». «Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Տաթև. ամ. 113ա. «Ողկոյզն ճմլեալ, պարզեալ գինին բերի ի ճաշակ բանական մարդոյն, իսկ կնճիռն և **դեզնին**՝ կերակուր խոզից»: Բառն ըստ հայագետի «աւելած աղբ, անասունների թրիք» իմաստով գործածական է Ղարաբաղի բարբառում: ինչը թույլ է տալիս ինչպես «պէլի» բառի դեպքում ենթադրելու, որ ժամանակին բառը համագործածական բառերի շարքում է եղել:

Դնել - Հիմնական նշանակությունն է «դնել»-ը, սակայն բազմաթիվ այլ իմաստներ ստանալով, ձեռք է բերել նաև քիչ գործածական՝ Տաթևացու պարագայում՝ «**անգամ**» իմաստը, որ նկատել է Աճառյանը, սակայն գործածությունը չի բերել. այն հետևյալն է. «որպէս զսամուէլ յորժամ տղայ էր, երեք կոչելովն ոչ գնաց մօտ աստուած, այլ մօտ ի Զեղի. ապա ի յետի **դիրն** երկու հետ ձայնեաց. «սամուէլ, սամուէլ...». Տաթև. ամ. 693:

Տաթևացու բառավկայություններին հղելիս Աճառյանը գործածում է «Արմատական բառարան»-ի բառաբացատրության բոլոր մոտեցումները, այսինքն՝ բուն բացատրության կողքին Տաթևացու բառագործածությամբ իր բառերով՝ կամ «ճշտում է բառի նշանակության նրբությունները», կամ վերականգնում է ենթադրելի ճիշտ բառաձևը, կամ էլ այն բերվում է իբրև ժամանակակցի վկայություն, մի բան, որ ոչ բոլոր հեղինակների պարագայում է կիրառելի եղել: Ըստ էության, սա մի փաստ է, որ գրաբարյան արմատական բառերի պարագայում ի դեմս Տաթևացու Աճառյանը նկատել է վստահելի գիտակին:

Տալով հայ մատենագիտության հայտնի շրջանաբաժանումը՝ անվանի հայագետը հատուկ ուշադրություն է հրավիրում, որ որ հայ մատենագիտության հինգ շրջաններից միայն երկուսի՝ ոսկեդարյան շրջանի և հետ-ոսկեդարյան շրջանի բառերն են ընդգրկվել «Արմատական բառարան»-ում. «Ստորին [միջին հայերենի բառ բնաւ չկայ]»⁴, - նշում է հայագետը (հետագայում այս բացը լրացվեց Ռ.Ս.Ղազարյանին և Յ.Ս. Ավետիսյանին վերոնշյալ «Միջին հայերենի բառարան»-ով) այսինքն, իր բառարանում ընդգրկելով Տաթևացու գրական ժառանգության բառանյութը՝ հայագետը ընդհանրապես կասկածելու տեղ չի թողնում, որ այս հեղինակի գրական ժառանգության բառանյութը «ոսկեդարեան» կամ՝ «հետ ոսկեդարեան» շրջանին է պատկանում, դրանով իսկ ցույց տալով իր անհամաձայնությունը Նոր հայկազեան բառարանի հեղինակներին, որոնք Տաթևացու ոճը ժամանակին բնութագրել են «ստորին»⁵:

Աճառյանը սկզբունքային մի նկատառում էլ ունի, որտեղ կարևորում է բառերի ածանցավոր տարբերակների բառավկայությունները: Այդ ուշագրավ դիտարկման մեջ նա գրում է. «Արմատի վկայութիւններից հետոյ դնում են նոյն արմատից յառաջացած կարևոր բառերը՝ իրենց վկայութեամբ: Սրա նպատակն է նախ՝ ցոյց տալու, թէ նոյն արմատը ինչ կենսունակութիւն ունի հայ լեզուի մէջ, կղզիացած և քիչ գործածական մի ձև՝ է, թէ աճած ու զարգացած բառ»⁶, այսինքն բառի ցանկացած վերընծյուղում, տվյալ դեպքում՝ բառի ածանցումը, ըստ հայագետի, նախ տվյալ բառի կենսունակությունն է ցույց տալիս, ուստի այստեղ էլ ցանկացած բառավկայություն, այդ թվում՝ Գրիգոր Տաթևացու, կրկնակի արժեք են ձեռք բերում՝ մի կողմից լեզվի բառապաշարի զարգացման միտումների առումով, մյուս կողմից իբրև ժամանակակցի վկայություն՝ տվյալ բառի գործածության վերաբերյալ:

⁴ Նույնը, էջ 7:

⁵ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Եր. 1979թ., հ. 1, էջ 15:

⁶ Զր. Աճառյան, Արմատական բառարան, հ.Ա, էջ 5:

Ինչպես նշեցինք, Տաթևացու բառագործածությամբ «Արմատական բառարան»-ում երբեմն «ճշտվում է բառի նշանակության նրբությունները», երբեմն վերականգնվում է ենթադրելի ճիշտ բառաձևը, երբեմն էլ այն բերվում է իբրև ժամանակակցի վկայություն: Այսպես օրինակ, բերելով «Ազի» բառը, Աճառյանը ստուգաբանության պատմության մեջ հիմնվելով Տաթևացու բառագործածության վրա, հետաքրքիր ընդհանրացում է կատարում. «Տաթև. հարց. 371 **ազատ** «անդամը կտրած», որից երևում է, թե ազի նշանակում էր նաև «առնի», ինչպես է և պոչ», այսինքն մեզ հայտնի «ազի» բառի երկրորդ իմաստը ժամանակի ընթացքում դուրս է եկել:

Հետաքրքիր է նաև «Ապուր» բառի ստուգաբանության մեջ Տաթևացուն վկայակոչելու մեջ Աճառյանի բացատրության մանրամասները: Ըստ Աճառյանի՝ «Ապուր» - «Ապրիլ», «ազատիլ բայը յետոյ ստացել է «կեալ, ապրիլ» նշանակութիւնը. արդէն հին լեզուի մեջ էլ կան պարագաներ, որ «ազատելու» հետ նաև «կեալ» նշանակութիւնը անբաժան է»⁷: Այս բացատրությունից հետո՝ հղելով Գրիգոր Տաթևացուն, Աճառյանը գրում է. «Հներից Տաթև. ամ. 261 գրում է. «Ապրանքն փրկանք թարգմանի». ուզում է ասել, թե ապրանք ծագում է ապրիլ «ազատիլ» բայից»⁸: Հեղինակի բացատրության մեջ «ուզում է ասել»-ը հնչում է իբրև համաձայնություն կամ ասածի հիմնավորման փորձ, այսինքն հեղինակը տեսնում է «ապուր, ապրիլ, **ապրանք** - ազատիլ(փրկիլ)» անցումը, որի վկայակոչումը կա Տաթևացու մեկնության մեջ: Նույնն է «**ազռալ**» բառի դեպքում. «**ազռալ** - «Հներից Տաթև. հարց. 220 համարում է արդէն բնածայն բառ»: «Համարում է արդէն բնածայն բառ»-ը վկայում է հին մեկնության ճշտությունը: Կամ՝ «**զաւազան**» բառի դեպքում. ստուգաբանելով այն իբրև «անասուն քշելու փայտ»՝ Աճառյանը գրում է. «Ուղիղ է Տաթև. ձմ. լգ. «**զաւազան**, այսինքն որ յարկանէ զանբանս»:

Գալով «**Բալաթիկին**» բառին՝ «մահակ, կոպալ» նշանակությամբ, Աճառյանը գրում է., որ՝ «չորս անգամ զանազան ձևերով գործածուած են գտնում յետին շրջանի գրականութեան մեջ, այսպէս՝ ուղղագոյն **բալաթիկին** ձևով Տաթև. ձմ. իգ...»⁹: Այստեղ մեզ հետաքրքրողը «**ուղղագոյն**» բառն է, որովհետև իր մեկ այլ աշխատության մեջ՝ «Հայերէն նոր բառեր հին մատենագրութեան մեջ»¹⁰ Աճառյանը, բերելով այս բառի այլ

⁷ Հր. Աճառյան, *Արմատական բառարան*, հ.Ա, էջ 239:

⁸ Նույնը:

⁹ Հր. Աճառյան, *Արմատական բառարան*, հ.Ա, էջ 387:

¹⁰ Հր. Աճառյան, *Հայերէն նոր բառեր հին մատենագրութեան մեջ*, հ.Բ, Եր. 1926 թ., էջ 139:

վկայություններ՝ «բլատկի», «բլաթկին», «պլատկի», ճիշտ է համարում («ուղղագոյն») Տաթևացու «բալաթկին» գործածությունը, որովհետև ըստ Աճառյանի բառը փոխառյալ է պարսկերեն «balatigin» ձևից, հետևաբար ճիշտ գրչագիրը Տաթևացու «բալաթկին»ն է:

Տաթևացու մեկ այլ բառագործածություն էլ թույլ է տալիս քննարկելու «Արմատական բառարան»-ի ընդունած տարբերակից տարբերվող մի ստուգաբանություն: Խոսքը վերաբերում է «արահետ» բառին, որ ըստ Աճառյանի բնիկ հայերեն բառ է՝ «կազմուած այր և հետք բառերից»: Բառի ստուգաբանության պատմությունից, սակայն, պարզ է դառնում, որ շատ հայագետներ այն համարել են առաջացած՝ «յար և հետք» բառակապակցությունից: Ըստ Աճառյանի՝ հայագետներից մեկը նույնիսկ «արահետ» ձևը սխալ համարելով՝ այնուհետև սկսում է գործածել **յարահետ**: Այս վերջինը մեր կարծիքով ավելի արժանահավատ է, որ երկու անգամ հաստատվում է Տաթևացու բառագործածությամբ, որոնք Աճառյանը բերում է, սակայն զարմանալիորեն ուշադրություն չի դարձնում. (Տաթև. ամ. 399 (**յարահետ եղեալ** կորնչին դևք). Տաթև. հարց. 206. (յորժամ լուծանի, ամենևին **յարահետ լինի** ամպն): Մեր կարծիքով նույնիսկ կարելի է առաջ քաշել «**յարեալ հետք**» տարբերակը:

Այսպիսով, Աճառյանի «Արմատական բառարան»-ի բառաբացատրության բոլոր մոտեցումներից երկուսը ի դեմս վերոնշյալ վերլուծությունների Տաթևացու դեպքում գործածված ենք գտնում («ճշտվում է բառի նշանակության նրբությունները», կամ վերականգնվում ենթադրելի ճիշտ բառաձևը). մնացյալ դեպքերում հիմնականում գործ ունենք ժամանակակցի վկայության կամ բառամեկնության հետ. վերջինիս դեպքում՝ երբեմն տարբերվող մյուսների մեկնություններից, ինչպես օրինակ՝ **ալէլու, այր, ապրիլ** բառերի դեպքում:

Աբեղայ - «Յներից Տաթև. ամ. 52 մեկնում է «աբեղայն հայր ասի»:

Ագահ - «Ագահ և որկրամուլ **հոմանիշների տարբերութեան վրայ խօսում է** Տաթև. ամ. 252»: Բերվում է ավելին քան ժամանակակցի վկայությունն է:

Ագի - «Տաթև. հարց. 371 **ագատ** «անդամը կտրած», որից երևում է, թե ագի նշանակում էր նաև «առնի», ինչպես է և պոչ»:

Ագռաւ - «Յներից Տաթև. հարց. 220 համարում է արդէն բնածայն բառ»: «Համարում է արդէն բնածայն բառ»-ը վկայում է հին մեկնության ճշտությունը:

Ալ [ք] - «Ծննդկաններին թշնամի՝ այլանդակ կերպարանքով մի չար ոգի: Տաթև. հարց. 150»:

Ալափ - «Խոտ հնձեալ ի կերակուր երիւարաց բանակի». Տաթև. ամ. 510»:

Ալէլու - Աճառյանը չի համաձայնում Տաթևացու` «Ի յերբայեցի լեզուն ալ ասէ թէ՛ գայ յատնեսցի, էլ՝ Աստուած, ուիայ՝ օրհնեցէք և գովեցէք զկենդանին աստուած» մեկնությանը:

Ալիւր - «Տաթև. ամ. 231»:

Աղուորութիւն - «Տաթև. հարց. 250»:

Աղէկ - «Տաթև. հարց. 239»:

Աղթարմայ - «Կաթուիկ դարձած հայ». Տաթև. ձմ. ձժ»:

Աղքատ - «Չներից Տաթև. ամ. 360 մեկնում է. «Աղքատք կոչին, այսինքն ի յաղխեաց և յընչից հատեալ»:

Աղօթք - «Չներից Տաթև. ձմ. հթ այսպէս է ստուգաբանում. «թող արարէք մեղաց ձերոց...»: «Նոյն հեղինակը՝ ամ. 323 աղօթք հանում է աղ բառից»: Աճառյանն ինքը կապում է «աղաչել» բառի հետ:

Անառն - «Տաթև. հարց. 197»:

Ամիս - «Տաթև. ձմ. ա. «Ամիս կոչի ի լուսնոյն, զի յաւուրս 30 պատէ զամենայն կեդանակերպսն...»: Աճառյանն ընդունում է այս մեկնությունը՝ բառը ծագած համարելով հնդեվրոպական նախալեզվի «mens» ձևից՝ «որի ժառանգներն են սանս mas «լուսին, ամիս»..., հայրս «maha» (ամիս), որից էլ մեր՝ մահիկը (ամիս)»:

Այր - «Չներից Տաթև. ամ. 54 այրն պատկեր թարգմանի (բայց յայտնի չէ, թէ ինչ լեզուով է այս ստուգաբանութիւնը)»:

Անկան (անգան) - «սանդ, հաւան ... նոյնն է անգանակ՝ «կոնք» Տաթև. հարց. 359, որ կենդանի է արդի գաւառներում»: Չեղինակը Տաթևացու մեկնության ճշտությունը հաստատում է բարբառներում բառի կենդանի գործածության փաստով:

Աշխարհ - «Տաթև. ձմ. ճժ. «Կոչի աշխարհ, այսինքն է աշխար, որ է սուգ և տրտմութիւն և միշտ և հանապազ պարտ է աշխարել մեզ... նոյնն է և Տաթև. հարց. 210»:

Աշուն - «Չներից՝ Վանակ. վրդ ... նոյնը Տաթև. հարց. աշունն՝ որ անշնչին»:

Ապաշաւ - «զղջում»: «Ապաշաւել և ապաշխարիել բառերի տարբերության վրայ խօսում է Տաթև. ամ. 302»: Ինչպէս տեսնում ենք, հեղինակն այստեղ ակնարկում է նաև, որ Տաթևացին ունի բառագիտական վերլուծություն:

Ապրիլ - «հռովմէական տոմարի չորրորդ ամիսը»...: «Տաթև. հարց. 201 համարում է ծագած մի իմաստասերի անունից»: Բերում է այլ ստուգաբանություններ նույնպէս:

Առիւծ - «առիւծն ի յառնելոյ»՝ ...(յափշտակել բայից). Տաթև. հարց. 220:

Աս - «ասածը, խօսք» ...Տաթև. հարց. 216. **անասուն** բառը մեկնում է՝ «զի **անխօսուն** են կամ զի **անսնունդ** և **անընտել**» (ըստ այսմ հանում է **աս** կամ **սուն** արմատից)»:

Աստուած - «Տաթև. հարց. 49 Աստուածն **յաստ էած** զմեզ և կամ ստեղծող և կամ ճանաչող լսի. իսկ Տաթև. ամ. էջ 78 ա «Աստուած տեսող թարգմանի»:

Ատուր - «Քրիստոսի խաչափայտի առաջին բևեռի անունը» Տաթև. հարց. 495: Աճառյանը Տաթևացու այս եզակի գործածությունը բնութագրում է իբրև «նորագիւտ բառ»:

Արահետ - «ճամբայ», սակայն վկայված է նաև՝ «արահետ լինիլ»՝ «բնաջինջ լնել, անհետ դառնալ» իմաստը: Տաթևացու բառավկայությունները հենց այս իմաստով են. Տաթև. ամ. 399 (**յարահետ եղեալ** կորնչին դևք). Տաթև. հարց. 206. (յորժամ լուծանի, ամենևին **յարահետ լինի** ամպն):

Արաց - «հայկական տոմարի վեցերորդ ամիսը». ... Տաթև. հարց. 200. «Ի յունել ձեան զլերինս և զբլուրս, ասեն **արանց** է այս ճանապարհ և ոչ կանանց...»: «Իսկ Տաթև. ձմ. ա. մեկնելով նոյն բառը՝ գրում է «**Արաց**՝ առ ի յօրինել զայրն Աստուծոյ զԱդամ, որ իբրև զաման բրտի այրեալ, թրծեաց սիրով հոգւոյն»:

Արգեստես - Արիստոտելից հետո հայ մատենագիրներից ունի միայն Տաթևացին՝ «հյուսիս - արևմտեան քամի» նշանակությամբ. «Տաթև. հարց. 205. ուրիշ տեղ գործածուած չէ»:

Արեգ - Տաթևացին հիշատակում է նախ իբրև հայկական տոմարի ամսանուն. «Տաթև. հարց. 201. «Որպէս թէ յառնեն բոյսք և բանջարք աստուծային հրամանաւն, **արի** ասէ հիւսիսի և **եկ** հարաւ, որ է զարնան ամիսն (ըստ Աճառյանի՝ «ուրեմն հասկանում է **արեկ**)»: Հայագետը բերում է նաև երկրորդ բացատրությունը. «Տաթև. ձմ. ա. մեկնում է՝ «Արեգի՝ յառաջընթաց է ըստ ձայնին բանի և չկա, այսինքն կարոտութիւն հնոյն օրինաց յայսմհետէ, զի ամենայն ինչ նոր եղև Քրիստոսիւ»:

Արտօսր - «Տաթև. Մեկն. սաղմ. հթ. **արտասուք** և **արտօսր** մեկնում է **անօսր**, **արտաքս**, **հոսիլ** և **արտևանունք** բառերով: Նոյնպէս Տաթև. հարց. 787 «արտասուք», այսինքն՝ **արտաքսեալ**»:

Աւագ - «Հարիւրաւագ, հազարաւագ՝ «հարիւրապետ, հազարապետ» նշանակությամբ՝ «Տաթև. ամ. 633»:

Աք - «ոտք», որից ունենք՝ արացի, արք ածել (ոտքով զարնել). «Տաթև. ամ. 276»:

Բամբասել - «Տաթև. հարց. 381. «բամբասանքն՝ բասիր բան զայլմէ»:

Բարտի - «մի բարձր ծառ է. Տաթև. ամ. 246»:

Բել - «կոտրած». Տաթև. ամ. 296, 519. **բեկտոր**»:

Բեղզեբուղ - Ըստ Աճառյանի ծագումն է՝ «եբր. «be'elzebub», որ բուն նշանակում է «ճանճիկ աստուած» և փղշտացուց աստուածներից մեկն էր: Եօթանասունք այս բառը մեկնել կամ կարդացել են «be'elzebul», որ նշանակում է «աղտեղութեան կամ աղբի աստուած», որից՝ խսկց. «zibil»: Տաթևացին ահա գործածում է այս վերջին մասը միայն՝ «զեբուղ». Տաթև. ամ. 70:

Բէլ - «կնքահայր». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնոււմ են գործածուած Տաթև. ամ.146. «Զիողևոր հայր զկնքահայր, որ է **բէլն**»: Բառը Ղարաբաղ, Գորիս բարբառում պահպանվել են «**պէլի**»՝ նույն «կնքահայր» իմաստով: Ըստ Աճառյանի կարող է առաջացած լինել «**պայլ**» (դայեակ, խնամակալ) միջինհայերենյան փոխառությունից, սակայն ըստ հնչյունական օրենքների այս բարբառներում այն պետք է տար «բ»:

Բիժ - «աչքի կեղտ, ճիպո» - «Տաթև. ձմ. խթ. բժոտիլ»:

Բոկ - «բոբիկ, ոտքը մերկ» - «բոկիկ. Տաթև. ձմ. ճծ. (երիցս)»:

Բոկեղ - «մի տեսա կլորակ հաց». «մէկ մէկ անգամ ունին Վրդն. ել. և Տաթև. հարց. 357»:

Բոսոր - Աճառյանը բերում է բառի թե նախնական հատուկ անուն լինելը, ապա «արենագոյն կարմիր» իմաստը: Բերում է նաև Տաթևացու բացատրությունը. «Տաթև. ձմ. ճծա. մեկնում է «Եդոմն կարմիր երկիր թարգմանի և **բոսորն նեղութիւն**»:

Բորթ - «Տաթև. ձմ. դգ. «խաւարաաբորթ»՝ «յորդ խաւարով, մուրը շատ»:

Գազան - «Տաթև. ձմ. ճթ և հարց. 216. «Գազան կամ զի զեղող են և պատառող, կամ զանազան և ահագին կերպարանս ունին»:

Գաղել - «ծածկել, թագցնել, պահել». «Բազում ինչս ստանայ, գաղէ և ծածկէ». Տաթև. ամ. 253»:

Գաղտ - «Գաղտնի, ծածուկ կերպով»: Աճառյանը այս բառի հետ է կապում «**գաղտառ**» բառը, որ ըստ հայագետի՝ **նորագիւտ բառ է** և «յետևից ծածուկ կծող շուն» իմաստով վկայում է Տաթև. ամ. 250: Տաթևացին բերում է իբրև «նախանձի» հոմանիշ՝ հետևյալ կերպ. «Իսկ նախանձոտն է որպէս **գաղտառ** շունն»¹¹:

Գայթ - «ոտքը գայթիլ՝ ...սխալուիլ կամ մոլորիլ»: «**Գայթ** ձկից յառաջացած է ռմկ.Գեթ «վնաս, յանցանք, որ մի քանի անգամ գտնոււմ են գործածուած յետին գրականութեան մէջ, ինչ. «Մայրն՝ յորժամ **գէթ առնէ** մանուկն իւր, հարկանէ, այլ սիրտ

¹¹ **Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան, Ամառան հ., Կ.Պոլիս, 1741թ., էջ 250:**

նորա թախծի ընդ գանն». Տաթև. ձմ. հե.»: «Սրանից կազմուած է **գիթվոր** «մեղապարտ, յանցաւոր». Տաթև. հարց. 392»:

Գար - «ցաւ կամ հիւանդութիւն». խելագար «գլխի ցաւ ունեցող». Տաթև. ամ. 88. (Թէ խելագար մարդոյն զոտն և զբազուկս պինդ չուանով կապեն, գլխոյն ցաւն փոքրանայ):

Գարուն - «որ գայ ի յարումն». Տաթև. հարց. 197:

Գաւազան - «անասուն քշելու փայտ»: Ուղիղ է Տաթև. ձմ. լգ. «գաւազան, այսինքն որ յարկանէ զանբանս»:

Գերեզման - Աճառյանը բերում է Տաթևացու մի շարք մեկնություններ, այդ թվում հետևյալը. «պարսիկ բառ է՝ ներքոյ հողոյ». Տաթև. հարց. էջ 678: Հայագետը այնուհետև իր կողմից հավելում է այդպէրպէս ստուգաբանելու հիմքը՝ «իմա՝ **ziri zamin**»՝ ճիշտ համարելով, սակայն, Լագարդի «garotman»՝ «երկինք» կամ «գովեստի տուն» ստուգաբանությունը:

Գիժ - «խենթ, խելագար»: Բերված տվյալներով առաջին հիշատակությունը պատկանում է Տաթևացուն. Տաթև. հարց. 371:

Գին - Հայագետը «նորագիւտ բառ» է համարում այս արմատով կազմված Տաթևացու «**խնկագին**» բառը. Տաթև. ձմ. ճը:

Գիշեր - «Գիշեր՝ զի **գարշանայ երր**». հարց. 196»:

Գնչել - «խոզի ճուտի ձայն», որից՝ «**գնչու**՝ «թլուատ, թոթով, կակազ»: Տաթևացին բերում է «**գնչուտ**» տարբերակով. Տաթև. հարց. 289:

Գոսակ - «քարծ, մօրուսի մազը չբուսնող». «Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում են գործածուած Տաթև. ձմ. ճժէ»:

Գործ - Բառը՝ տարբերվող «**ածուխ**» իմաստով է կիրառել Տաթևացին, որ նկատել է Աճառյանը, սակայն գործածությունը չի բերել. այն հետևյալն է. «զի թէպէտ նստի ի վերայ շիջեալ **գործելոյն**՝ այլ ոչ ի վերայ հրացելոյն. նոյնպէս փորձութիւն սաանայի՝ փախչի յայնմանէ, որ ունի զհաւատն կենդանի». Տաթև. ամ. 79:

Գուլ - «բութ, ոչ սուր», որից՝ «**գլիլ**»՝ «բթանալ». Տաթև. ձմ. ճիթ:

Գուրգուր - «աղաւնիի նման մի թռչուն է». «Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում են գործածուած Տաթև. ամ. 421»: Աճառյանը համարում է բնածայն բառ, ինչպէս և մեկնում է Տաթևացին:

Գրգլի - «ցնցոտի, քուրծ». Տաթև. ամ. 175՝ «գլգլեկ», որտեղ ըստ հայագետի՝ «ր նմանելով յաջորդ լ-իւ յառաջացել է **գլգլեկ**»:

Դալապր - «թուր կամ կացին». «Նոյնը տարբեր շարքով ունի Տաթև. ձմ. ճխք»:

Դարիճակ - «ծուլելու կաղապար». Տաթև. հարց.82, 387»:

Դեզմի - «խաղողի ճմռելուց յետոյ մնացած ակելորդ թեփը». «Նորագիտ բառ, որ մէկ անգամ գտնուում են գործածուած Տաթև. ամ. 113ա.

Դէմ - «երես, կերպարանք», որից՝ դիմատիպ (նորագիտ բառ). «Աչքն տեսանէ մինչև **ի դիմատիպ** ինչ». ըստ Աճառյանի՝ «տեսութեան սահման կազմող առարկան»:

Դնել - Հիմնական նշանակությունն է «դնել»-ը, սակայն բազմաթիվ այլ իմաստներ ստանալով, ձեռք է բերել նաև քիչ գործածական՝ Տաթևացու պարագայում՝ «անգամ» իմաստը, որ նկատել է Աճառյանը, սակայն գործածությունը չի բերել. Տաթև. ամ. 693:

Դռուն - աղավնակերպ թռչուն, որի մեկանգամյա գործածությունը ըստ Աճառյանի Տաթևացու բառագործածությամբ է վկայված: Տե՛ս «Գրգուր» բառի բացատրության տակ:

Ի մի բերելով Տաթևացու այն բառավկայությունները, որոնց հղել է Աճառյանը, նկատելի է, որ դրանց մեջ կան բառեր, որոնց միակ գործածությունը պատկանում է Գրիգոր Տաթևացուն, սակայն այստեղ կա հետաքրքրական երկրորդ հանգամանքը. այդ բառերի մի մասը՝ ըստ հայագետի, առայսօր գործածական են բարբառներում, որ փաստում է ժամանակին այդ բառերի համագործածական լինելու մասին: Դրանց թվում են՝ «Բէլ» (պէլի՝ կնքահայր), «Դեզմի» (խաղողի ճմռելուց յետոյ մնացած ակելորդ թեփը), **Անկան** (անգամ՝ կոնք), **Ատուր** (Քրիստոսի խաչափայտի առաջին բևեռի անունը) բառերը և այլն:

Վեր են հանվում բառերի նոր նրբիմաստներ, ինչպես **ագի**, **ապուր**, **բոսոր** (նեղ), **գայթ**, **գործ** (ածուխ), **դարիճակ**, **դնել** (անգամ) բառերի դեպքում է:

Այսպիսով, հայագիտության կոթողային այս աշխատության՝ «Արմատական բառարան»-ում, ինչպես դրա առաջաբանում հայագետն է ասում՝ «յիշելու արժանի» մատենագիրների շարքում հավուր պատշաճի հիշատակելով նաև Գրիգոր Տաթևացու բառագործածությունները և դրանց մեկնությունները՝ Աճառյանն արժևորել է դրանք իր բառերով՝ «իբրև «հայեացք»՝ կարծիք, հայ լեզուի կազմութեան մասին»՝ միանգամայն արդարացիորեն լրացնելով «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» **միտումնավոր** «բացթողումը»: